Յունիս 30. № 1698. Կովկասեան փոխարքայի պաշտօնակատարից խնդրուեց տնօրինել, որ Թաւրիզի ռուսաց Գեներալ հիւպատոսը պահակներ տայ տեղւոյն առաջնորդ Տ. Կարապետ եպիսկոպոսին գնալու Ս. Թադէոս առաքեալի վանքը վանահօր սպանութեան և աւերածութիւնների հանգամանքը քննելու համար։

Յուլիս 1. № 1699. Առաջադրութիւն Ատրպատականի Հայոց առաջնորդ Տ. Կարապետ եպիսկոպոսի անունով, որով յայտնուեց թէ իրան պահակներ տալու համար դիմուեց ուր հարկն է։

ԳԱՂՈՒԱԾ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳԻՐՆԵՐԻՑ

Յունիսի 1-ին թ. 385, Սինոդը լսեց Երևանի Կոնսիստորիայի անցած Մարտի 13-ի թ. 1884 յայտարարութիւնը Զանգեզուրի գաւառի Եայջի գիւղացի Թէոդորոս Տէր Սահակեանին թահանայ ձեռնադրելու մասին. որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ Թէոդորոս Տէր Սահակեանին և առաջադրել Երևանի Փոխ-Թեմակալին ձեռնադրել նրան քահանայ Եայջի գիւղի համար։

Յունիսի թ. 390. 3-ին Սինոդը լսեց Երևանի Կոնսիստորիայի անցած փետրուարի 26-ի թ. 1028 յայտարարութիւնը մահմեդական Ալի Ռեզա օղլուն լուսաւորչական դաւանութիւն ընդունելու մասին. որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել Հայաստանեաց եկեղեցու ծոցը Նոր Բայազետի գաւառի Նորագուղ գիւղի վերաբնակիչ մահմեդական քուրդ Ալի Ռեզա օղլուն։

Յունիսի 3-ին թ. 391. Սինոդը լսեց Երևանի Կոնսիստորիայի անցած ապրիլի 30-ի թ. 2625 յայտարարութիւնը Էջմիածնի գաւառի Բիւրական գիւղի բնակիչ Գեղամ Տէր Յովհաննիսեան Սաղաթելեանին Ինաքլու գիւղի վերայ քահանայ ձեռնադրելու մասին. որոշեց. թոյլ տալ Երևանի Կոնսիստորիային ընդունել հոգևոր կոչման մէջ յիշեալ Սաղաթելեանցին և առաջադրել Երևանի Փոխ-Թեմակալին

ձեռնադրել նրան քահանայ Էջմիածնի գաւառի Ինաքլու գիւղի համար։

Յունիսի 3-ին թ. 392։ Սինոդը լսեց Երևանի Կոնսիստորիայի անցած Մայիսի 7-ի թ. 3089 յայտարարութիւնը Երևանի գաւառի Տահապ գիւղի եկեղեցու նորոգութեան մասին. որոշեց. թոյլ տալով Տահապ գիւղի եկեղեցու նորոգութիւնը, նկատողութիւն անել գիւղի ծխական հոգաբարձութեանը, որ առանց կանխագոյն թոյլտուութեան յիշեալ նորոգութեան մեծ ման արդէն արել է։

Յունիսի 10-ին թ. 407։ Սինոդը լսեց Ամենապատիւ Տ. Տեղակալի այս յունիսի 7-ի թ. 1630 առաջադրութեան հետ յանձնուած նեղքին գործերի պ. Նախարարի անցած մայիսի 25-ի թ. 4868 գրութիւնը, որով պ. Նախարարը յայտնում է թէ, որպէս հաղորդում է Նովոչերկասկի գաւառական Պալատի Պրոկուրորը, Յուսիկ վարդապետ Զոհրաբեանի մեղադրական գործը առաջարկուելէ կարճելու. որոշեց, Նեղքին Գործոց պ. Նախարարի գրութեան իմաստի համաձայն Սինոդիս անդամ Տ. Յուսիկ վարդապետին հրաւիրել վարելու իւր պաշտօնը։

Յունիսի, 10-ին թ. 409։ Սինոդը լսեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի անցած տարուայ Դեկտեմբերի 16-ի թ. 5874 յայտարարութիւնը Աղէքսանդրապոլի գաւառի Փիրթիքեան գիւղի ընտրիչ Արամ Մանուկեանցին Բորչալուի գաւառի Ազբեօրքի գիւղի վերայ քահանանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Վրաստանի Հայոց Կոնսիստորիային հոգևոր կոչման մէջ ընդունել Աղէքսանդրապոլի գաւառի Փիրթիքեան գիւղացի Արամ Տէր Յարութիւնեան Մանուկեանցին և առաջադրել Տ. Եփրեմ եպիսկոպոսին ձեռնադրել նրան քահանայ Բորչալուի Ազ-Բեօրքի գիւղի համար։

Յունիսի 15-ին թ. 420. Սինոդը լսեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի անցած մայիսի 9-ի № 2104 յայտարարութիւնը, որից երևում է, որ Բաթումում մեռած Հայ-լուսաւորչական Սարգիս Աւետեանին վերջնիս կաթոլիկ կինը թաղել է տուել հայ կաթոլիկների գերեզ-

մանաւանդը առանց օրինական ծխականութեան. որոշեց. պատուիրել Վրաստանի Հայոց կոնսիստորիային Բաթումի բնակիչ հանգուցեալ Սարգիս Աւետսեանի կնոջը յանձնել ի դատ մարմնաւոր իշխանութեան քրէական օրինաց 78 յօդուածի համաձայն իւր ամուսնոյն առանց եկեղեցական ծխականութեան թաղելու համար։

Յունիսի 17-ին թ. 426. Սինոդը լսեց Ղարաբաղի Կոնսիստորիայի անցած մայիսի 3-ի № 1149 յայտարարութիւնը Կարեագինի գաւառի Թաղասեր գիւղի բնակիչ Բաղդասար Գրիգորեանին քահանայ ձեռնադրելու մասին. որոշեց. թոյլ տալ Ղարաբաղի կոնսիստորիային ընդունել հօգեոր կոչման մէջ Թաղասեր գիւղի բնակիչ Բաղդասար Գրիգորեանին և թեմում եպիսկոպոս չլինելու պատճառով առաջարկել Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի նախագահող Տ. Եփրեմ եպիսկոպոսին ձեռնադրել նրան քահանայ յիշեալ Թաղասեր գիւղի համար։

Յունիսի 20-ին թ. 433. Սինոդը լսեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի անցած մայիսի 9-ի № 2105 յայտարարութիւնը Գորի քաղաքի Մկրտիչ քահանայ Արշակունու անպարկեշտ վարմունքների մասին, որոշեց. աչքի առաջ ունենալով Գորի քաղաքի Մկրտիչ քահանայ Արշակունու անուղղայ ու դայթակղեցուցիչ վարք ու բարքը՝ Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի եզրակացութեան համեմատ զրկել նրան քահանայական աստիճանից և խոպա-արձակել հօգեոր կոչումից։ Վճռի կատարման համար տալ հրաման Վրաստանի Հայոց կոնսիստորիային, պատուիրելով կատարման մասին տալ տեղեկութիւն Սինոդին։ Այս վճռի մասին յայտնել նաև Թիֆլիզի Նահանգապետին։

Յունիսի 24-ին թ. 438. Սինոդը լսեց Ներքին Գործերի պ. Նախարարի անցած մայիսի 25-ի № 4897 առաջարկութիւնը, որով յայտնում է, թէ Բաթումի քաղաքապետը ներկայացրել է Ներքին Գործերի Նախարարութեանը Բաթումի Շրջանային Դատարանի այս տարուայ Մարտի 9-ի վճռի պատճէնը, որով հաստատուել է Բաթումեցի Լիւդվիկ

Մէրգէլի կտակը, որպիսի կտակով յատկացուած է Բագուի Նորակառոյց Հայոց եկեղեցու օգտին 1000 ռուբ. վարագոյր դնելու համար, նաև 600 ռուբ. իւր թաղման և տապանաքարի համար և տարեկան 50-ական ռուբլի իւր հաշիւ ամեն տարի հոգեհանգիստ կատարելու, որոշեց. Ներքին Գործերի պ. Նախարարի № 4897 առաջադրութեան բոլանդակութեան մասին տեղեկութիւն տալով Շամախու Կոնսիստորային, պատուիրել ընդունել Լ. Մէրգէլի կտակած գումարները և գործադրել կտակի իմաստի համաձայն։

Յունիսի 24-ին թ. 441. Սինոդը լսեց Ամենապատիւ Տ. Տեղակալի անցած մայիսի 9-ի № 1541 առաջադրութիւնը, որի հետ Նորին Ամենապատուութիւնը վերադարձնում է Սինոդին, Մայր Աթոռի և նրան ենթադրեալ բոլոր հաստատութիւնների հաստատած 1911 թուականի նախահաշիւը, որոշեց. ուղարկել Մ. Աթոռի բոլոր հաստատութիւններին, թեմերի կոնսիստորիաներին և Հոգևոր կառավարութիւններին կարևոր քանակութեամբ նախահաշիւի տպագրուած օրինակներից, պատուիրելով անշեղ հետևել նախահաշիւում նշանակած գումարներին, որպէս զի իւրաքանչիւր յօդուածի տակ նշանակուած գումարը ծառայէր իւր նպատակին, իսկ եթէ որևէ յօդուածի համար նշանակած գումարը բաւական չլինի սահմանուած ծախքերը լրացնելու, նախահաշիւից դուրս նոր գումար ծախսելու համար պէտք է նախապէս առանալ Սինոդի առանձին թոյլտուութիւնը։

Յունիսի 27-ին թ. 444. Սինոդը լսեց Վրաստանի Հայոց Կոնսիստորիայի 1909 թ. փետրուարի 20-ի № 860 յայտարարութիւնը Բարչալուի գաւառի Սանահին գիւղի քնակիչ Մարտիրոս Ռուշանեան Միմէոնեանցին քահանայ ձեռնադրելու մասին, որոշեց. թոյլ տալ Վրաստանի Հայոց կոնսիստորիային ընդունել Մարտիրոս Միմէոնեանցին հոգևոր կոչման մէջ Սանահին գիւղի համար քահանայ ձեռնադրուելու և առաջադրել կոնսիստորիայի նախագահող Տ. Եփրեմ եպիսկոպոսին ձեռնադրել նրան քահանայ։

Պատճէն.

Ի 27 Մայիսի 1911 թ. № 1442. Ս. Էջմիածնի Սինոդում լսեցին զեկուցում. Սինոդիս պ. Պրօկուրօրը այս տարուայ յունուարի 17-ի № 38 մակագրութեամբ ուղարկել է Սինոդս մի գրագրութիւն, որից երեւում է, որ Մարտիրոս քահանայ Տէր Յարութիւնեանցը եւ Մեսրոպ քահանայ Մաջառեանցը 1910 թ. կազմելով Ալէքսանդրապօլի Զինուորական Առեանի համար մետրիքական քաղուած Ղուրթլիբուլաղ գիւղի մետրիքական մատեանից՝ չեն նշանակել ցուցակում այդ գիւղի բնակիչ Գասպար Մխիթարովին, սակայն, որպէս երեւում է 1907 թ. Ալէքսանդրապօլի Հօգեւոր կառավարութիւնից Զինուորական Առեանին ուղարկած մետրիքական քաղուածքներից, Մխիթարովը ծնուած է 1888 թ. հոկտ. 3-ին, հետեւաբար նա պէտք է մտնէր 1910 թ. քահանաների կազմած ցուցակի մէջ. Մարտիրոս քահանան այս առթիւ բացատրում է, թէ ինքը քահանայագործում է Ղուրթլիբուլաղ գիւղում սկսած 1899 թ. եւ տեղեկութիւն չունի 1888 թ. մատեանների մասին. իսկ կազմել է մետրիքական քաղուածը Ալէքսանդրապօլի Հօգեւոր կառավարութիւնից վերցրած տեղեկութիւնների հիման վերայ. Մեսրոպ քահանան բացատրում է, թէ ինքը Ղուրթլիբուլաղ գիւղի քահանայ չէ, այլ գործակալ Բօղեօխուշի շրջանի, որի մէջ մտնում է այդ գիւղը. քաղուածը կազմել է Մարտիրոս քահանան, թէ ինչ աղբիւրից՝ իրեն յայտնի չէ, այլ ինքը իբրեւ գործակալ վաւերացրել է Զինուորական Առեանին ուղարկած այդ քաղուածքը. Ալէքսանդրապօլի Զինուորական Առեանը, ուղարկելով այս գրագրութիւնը Երեւանի Նահանգական Զինուորական Առեանին, աւելացնում է, որ յաճախ, երբ երիտասարդներ զինուոր են կանչւում արտաքին տեսքով ճարում են նոքա մետրիքական քաղուած իբրեւ ապացոյց այն բանի, որ նոքա դեռ չեն հասել զինուորական հասակի, այդ պատճառով էլ նոցա անունը հանւում է զինուորական ցուցակից, այն պայմանով, որ կանչ-

ունին նոքա իրենց հասակակիցների հետ. մինչդեռ, նոցա նորից կանչելու ժամանակը, նոքա իրենց հասակակիցների թւում, քահանաների կազմած ցուցակով, չեն երևում, և գործում՝ յառաջանում է տարօրինակ խառնաշփոթութիւն։ Նկատի ունենալով նման կրկնուող շատ դէպքեր, Զինուորական Նախարարը մի քանի անգամ խնդրել է Աղէքսանդրապոլի Հոգևոր կառավարութեանը ուշադրութեամբ համեմատել և ստուգել քահանաների կազմած մետրիքական քաղուածները կառավարութեան մատեանների հետ. բայց Հոգևոր կառավարութիւնը չէ յարգել այդ խնդիրը և մետրիքական քաղուածները առաջուայ նման ուղարկւում են չստուգուած։ Այդ պատճառով Կովկասեան Զինուորական Նախարարը խնդրում է Նահանգականին կարգադրել, որպէս զի քահանաների կազմած քաղուածները Հոգևոր Կառավարութիւնը ուշի ուշով ստուգէ և համեմատէ կառավարութեան մետրիքական մատեանների հետ։ Այս խնդրի մասին Երևանի Նահանգական ատեանը խընդրել է Սինօդի պ. Պրօկուրօրի աջակցութիւնը և կարգադրութիւնը, իսկ պ. Պրօկուրօրը խնդրում է Սինօդից անել պատշաճ շրջաբերական կարգադրութիւն։ Հրամայեցին, ուղարկելով օրագրիս պատճէնը՝ շրջաբերական հրամանով պատուիրել բոլոր կոնսիստորիաներին կարգադրել, որ մետրիքական քաղուածները, որ տրւում են զինուորական ատեաններին, նախապէս ամենայն ուշադրութեամբ համեմատուեն չափաբերական մատեանների արձանագրութեանց հետ և խնամքով ստուգուեն։ Այս վճիռը հրատարակել նաև «Արարատ» ամսագրում։

Բնագիրը կրում է պատշաճ օրագրութիւններ. բնագրին համեմատ է.

Յ. ՄՈՒՇԵՂԵԱՆ